



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԳԱՆԻՆ ԸՆԴԴԵՄ ԻՍՊԱՆԻԱՅԻ

(Գանգատ թիվ 61800/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2013 թվականի փետրվարի 19

**ՎԵՐՋՆԱԿԱՆ**

**09/09/2013**

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմաններում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Գանին ընդդեմ Իսպանիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժանմունքը) Պալատը, հետևյալ կազմով՝

Ժոզեֆ Բասսադևալ (Josep Casadevall)՝ *Նախագահ*

Ալվինա Գյուլումյան (Alvina Gyulumyan)

Կորնելիու Բիրսան (Corneliu Bîrsan)

Յան Սիկուտա (Ján Šikuta)

Լուիս Լոպես Գիերա (Luis López Guerra)

Նոնա Ցոցորինա (Nona Tsotsoria)

Վալերիու Գրիցոն (Valeriu Gritco)՝ *դատավորներ,*

և Սանտիագո Բեսադան (Santiago Quesada)՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2013 թվականի հունվարի 29-ին դռնփակ խորհրդակցությամբ

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն ամսաթվին:

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Սույն գործը հարուցվել է 2008 թվականի դեկտեմբերի 10-ին՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Ալբանիայի քաղաքացի պարոն Լեցի Գանիի (Leci Gani) (դիմումատու) կողմից ընդդեմ Իսպանիայի Թագավորության բերված գանգատի (թիվ 61800/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Սալուում (Տարագոնա) գործող փաստաբան պարոն Տ. Ժիլաբերտ Բոյերտը (T. Gilabert Boyert): Իսպանիայի կառավարությունը (Կառավարություն) սկզբում ներկայացրել է իր լիազոր ներկայացուցիչներ պարոն Ֆ. Իրուրզուն Մոնտորոյը (F. Irurzun Montoro), այնուհետև՝ ներկայացուցիչ պարոն Ֆ. Սանց Գանդասեգուն (F. Sanz Gandasegui):

3. Դիմումատուն բողոք է ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի շրջանակներում, առ այն, որ ոչ [մինչդասական]<sup>1</sup> քննության, ոչ էլ դատական լուսմների փուլում իրեն պատշաճ և բավարար հնարավորություն չի ընձեռվել առարկելու և հարցեր ուղղելու տուժողին, ով իր դեմ ցուցմունք տված միակ վկան էր այն հանցագործությունների առնչությամբ՝ բացառությամբ պաշտոնական փաստաթղթերի կեղծման, որոնց համար ինքը դատապարտվել էր:

<sup>1</sup> Թարգմանիչը քառակուսի փակագծերն օգտագործել է սույն վճռի հայերեն տեքստը մատչելի դարձնելու համար:

4. 2011 թվականի հոկտեմբերի 21-ին գանգատը ուղարկվել է Կառավարություն: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ):

5. 2011 թվականի նոյեմբերի 4-ին Դատարանը տեղեկացրել է Ալբանիայի կառավարությանը Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դատավարությանը ներգրավվելու նրա իրավունքի մասին: Ալբանիայի կառավարությունը ներգրավվելու իր ցանկության մասին Դատարանին չի տեղեկացրել:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

6. Դիմումատուն՝ պրն. Լեաի Գանին (Leci Gani), ծնվել է 1975 թվականին և այժմ իր պատիժը կրում է Իսպանիայի Quatre Camins in La Roca del Vallès (Բարսելոնա) բանտում:

7. 2004 թվականի հունիսի 3-ին, դիմումատուի նախկին գուգրնկերոջ և որդու մոր՝ Ն.-ի կողմից ոստիկանությանը ներկայացված հաղորդումներից հետո դիմումատուն ձերբակալվել է Prat de Llobregat օդանավակայանում (Բարսելոնա) և բերման ենթարկվել ոստիկանության բաժանմունք, որտեղ նրան տեղեկացրել են իր ընտրությամբ փաստաբան կամ որպես այլընտրանք՝ հանրային պաշտպան ունենալու իրավունքի մասին: Դիմումատուն ընտրել է վերջին տարբերակը:

8. Դիմումատուի կողմից մի շարք լուրջ հանցագործություններ կատարելու՝ մարմնական վնասվածքներ պատճառելու, առևանգելու և Ն.-ին բռնաբարելու պնդումների առնչությամբ Գավայի (Gavà) (Բարսելոնա) հետաքննող թիվ 5 դատավորն իրականացրել է մինչդատական քննություն: 2004 թվականի հունիսի 5-ին դիմումատուին բերել են հետաքննող դատավորի մոտ, որպեսզի հարցաքննվի նշված հանցագործությունների կատարման մեջ մեղադրվելու վերաբերյալ: Նրան ներկայացրել է պաշտոնապես նշանակված հանրային պաշտպանը: Դատավորն առաջին հերթին դիմումատուին տեղեկացրել է իր ընտրությամբ փաստաբան ունենալու իրավունքի մասին: Նա՝ որպես իր իսկ կողմից ընտրված պաշտպան, հրապարակավ ընտրել է այն նույն հանրային պաշտպանին, ով հետաքննող դատավորի կողմից իրականացվող քննության ընթացքում ներկայացրել է իր շահերը:

2004 թվականի հուլիսի 6-ին դիմումատուն կրկին հարցաքննվել է դատավորի կողմից՝ իր փաստաբանի ներկայությամբ:

9. 2004 թվականի հուլիսի 22-ին Ն.-ն հետաքննող դատավորի ներկայությամբ ցուցմունք է տվել. դիմումատուի փաստաբանը ներկա չի գտնվել՝ առանց հիմնավորում ներկայացնելու: Ն.-ն հաստատել է այն պնդումը, որը ներկայացրել էր ոստիկանությանը՝ հավելելով որոշ մանրամասներ: Այս պնդումը գրավոր ձևակերպվել և ավելացվել է գործի նյութերին: Ներկայացված փաստաթղթերից չի երևում, որ փաստաբանի դրսևորած անփութության համար դիմումատուն վերջինիս պատասխանատվության ենթարկելու որևէ վարույթ հարուցած լիներ:

10. 2004 թվականի սեպտեմբերի 16-ին դիմումատուն հրաժարվել է իր փաստաբանից և անձամբ ընտրել մեկ ուրիշի, ով ստանձնել է նրա պաշտպանությունը:

11. Բարսելոնայի մարզային դատարանում (Audiencia Provincial) լսումները տեղի են ունեցել 2006 թվականի ապրիլի 19-ին: Ն.-ն, լսումներին մասնակցել է հոգեբանական ախտորոշման ենթարկվելուց հետո, որի արդյունքում հաստատվել է դատարանում ցուցմունք տալու նրա ունակությունը: Նա սկսել է պատասխանել հանրային մեղադրողի հարցերին, երբ նրա խոսքը հարկ է եղել ընդհատել, քանի որ նա ենթադրաբար տառապում էր հետտրավմատիկ սթրեսի ախտանշաններով, որոնք խոչընդոտում էին ցուցմունք տալ: Այդ ախտանշանները բժշկական հաստատում են ստացել լսումներից հետո: Արդյունքում, հանրային մեղադրողը, մասնավոր մեղադրողը կամ դիմումատուի փաստաբանը նրան խաչաձև հարցաքննել չէին կարող: Նախկինում դատարանն արդեն մեկ անգամ հետաձգել էր լսումները՝ Ն.-ի նմանօրինակ արձագանքից հետո: Արդյունքում, նրա լիարժեք հարցաքննության ապահովման համար ինչպես 2006 թվականի ապրիլի 19-ի լսումներից առաջ, այնպես էլ դրանց ընթացքում, [դատարանը] նրան հոգեբանական օգնություն է տրամադրել, սակայն անարդյունք: Այս կապակցությամբ Բարսելոնայի մարզային դատարանն իր վճռում նշել է.

«(...)

[Դատավարության] հետաձգման ժամանակ տուժողի մոտ նկատվել են հետտրավմատիկ սթրեսի ակնհայտ ախտանշաններ, որոնք խաթարում էին նրա հիշողությունը և ինքնաարտահայտման ունակությունը: Դատարանի վերջնական որոշումը [այսինքն՝ ժամանակավորապես դադարեցնել վկատուժող հարցաքննությունը և այն փոխարինել նրա՝ [տուժողի ոստիկանությանը և հետաքննող դատավորին ներկայացրած հայտարարությունների բարձրաձայն ընթերցմամբ] կամայական չէր, սակայն կայացվել էր նախորդ լսումների ժամանակ տեղի ունեցածի լույսի

ներքո, որոնք ևս նշված նույն պատճառով հետաձգվել էին և որոնց ընթացքում տուժողին հոգեբանական բուժման պարտադրելու կարգադրություն էր արձակվել, դատարանի ներքին համոզմունքը հաստատվել էր արժանահավատ թերապևտիկ գործընթացով, որի արդյունքում, սակայն, տուժողի գործունակությունը չէր վերականգնվել: Ե՛վ նոր լսումների ընթացքում վկայի առողջական վատ վիճակի հարատևությունը, և թերապևտիկ գործընթացի ձախողումը, որն այդ կարճ ժամանակահատվածում չհանգեցրեց դատարանի դրական կարծիքի ձևավորմանը (բանտում կալանքի տակ գտնվող մեղադրյալին վերաբերող վարույթներ), հիմնավորվում են տուժողի հարցաքննությունն անիրագործելի ճանաչելու մասին վերջնական որոշումը: Դատարանը նախկինում բազմիցս, գուցե չափից ավելի, փորձել է սպառել բոլոր միջոցները, որպեսզի նա ցուցմունք տա: Տրամադրվել են հոգեբանական աջակցության բոլոր հնարավոր տեսակները՝ լսումների ընթացքում հանգստացնող վարժություններ, լսումների հետաձգում և ընդմիջումներ, որոնք կարող էին վկային տրամադրել տուժողների [շահերի պաշտպանության] ծառայության աշխատակիցները: Որպես անվտանգության ապահովման միջոց՝ փորձեր են արվել նաև սահմանափակել նրա առնչությունն առավել բռնի իրադարձություններից և շեղելու ուշադրությունը դեպի այլ իրադարձություններ, որոնք ավելի քիչ հուզական էին: Այնուհանդերձ, ջանքերն անարդյունք էին, և վկայի համագործակցելու վճռական կամքին խոչընդոտում էր տուժողի հոգեկան վիճակի խաթարման ամենասարսափելի դեպքերից մեկը, որին դատարանը իր երկարատև մասնագիտական փորձառության ընթացքում երբևէ ականատես էր եղել: Վկան պատշաճ կերպով սկսել է իր հայտարարությունը՝ ներկայացնելով մեղադրյալի հետ իր փոխհարաբերությունների զարգացման մանրամասն նկարագիրը, խզման ընթացքը և թե ինչպես են խզումից հետո զարգացել իրենց փոխհարաբերությունները՝ հաշվի առնելով համատեղ երեխայի առկայությունը: Նրա վճռականությունն այնուհետև սկսել է թուլանալ, երբ թեթև դողացող ձեռքերով սկսել է պատմել այն ֆիզիկական հարձակումների մասին, որոնցից ինքը տուժել էր երկրորդ օրը: Ավելի ուշ, երբ սկսել է նկարագրել կոնկրետ այն բռնի գործողությունները, որոնց ենթարկվել է, ձեռքերի դողը վերածվել է բերանի և ողջ մարմնի անվերահսկելի դողի: Նրան առաջարկել են կանգնել, նստել, ջուր խմել կամ ձեռքերը բռնել, միննույնն է՝ ոչինչ չէր հանգստացնում: Միայն պարբերաբար արվող ընդմիջումների, դադարների և իր գործադրած ջանքերի շնորհիվ էր, որ մեկ ժամ անց նա կարողացավ շարունակել իր հայտարարությունը, որը հասավ իր դրամատիկ ավարտին, երբ նա դատարանին պատմում էր սառը ջրի լոգանքով խոշտանգման ենթարկվելու դրվագի մասին: Նրա ցուցմունքը, ըստ էության, հաստատում էր մինչդատական վարույթի ընթացքում [ներկայացրած] իր պնդումը և ապացուցում իր մոտ հետորավմատիկ սթրեսի առկայության հավաստիությունը, ինչը հետագայում հաստատվեց փորձագիտական եզրակացությամբ: Վկայի հարցաքննությունը շարունակելը անհամատեղելի կլիներ Եվրոպական միության 2001 թվականի մարտի 15-ի շրջանակային որոշմամբ հաստատված՝ Տուժողների պաշտպանության կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, որն ամրագրում է՝ «Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է երաշխավորել, որ այն դեպքում, երբ կարիք կա տուժողին, հատկապես՝

առավել խոցելի [տուժողներին], պաշտպանել դոնբաս դատական նիստի ընթացքում ցուցմունք տալու հետևանքներից, դատարանի կայացրած որոշման առկայության պարագայում տուժողները կարող են ցուցմունք տալ այնպիսի եղանակով, որը ցանկացած պատշաճ միջոցառումներով հնարավոր կդարձնի հիմնական իրավական սկզբունքներին համահունչ նշված նպատակի իրագործումը»:

12. Որպես կողմերի՝ Ն.-ին հարցաքննելու այլընտրանք, Բարսելոնայի մարզային դատարանը կարգադրել է բարձրաձայն ընթերցել դատավարության [մինչդատական] քննության փուլում նրա ներկայացրած պնդումները: Դիմումատուն ներկայացրել է փաստերի իր՝ տարբերվող շարադրանքը:

13. 2006 թվականի մայիսի 5-ին Բարսելոնայի մարզային դատարանը կայացրել է վճիռ: Դատարանը պարզել է, որ 2004 թվականի ապրիլի 4-ին դիմումատուն գնացել է Ն.-ի բնակարան և սպառնացել սպանել նրան, երբ վերջինս իրեն թույլ չի տվել տեսնել իրենց որդուն: Բնակարանից հեռանալիս նա երկու անգամ հարվածել է Ն.-ի մտերիմ ընկեր (արական սեռի ներկայացուցիչ) Ջ.-ի ավտոմեքենային՝ արդյունքում վնասելով փոխադրամիջոցը: Դատարանը նաև արձանագրել է, որ 2004 թվականի ապրիլի 6-ին, առավոտյան մոտավորապես ժամը 1-ին դիմումատուն ներխուժելով պատուհանից վերադարձել է Ն.-ի բնակարան: Ն.-ի կամքին հակառակ բնակարան մտնելով՝ նա բռնկոնքով հարվածել է Ն.-ի հետ այնտեղ գտնվող Ջ.-ին, այնուհետև շարունակաբար հարվածել է Ն.-ին: [Դատարանը] նաև գտել է, որ դիմումատուն Ն.-ի կամքին հակառակ երեք ժամ մնացել է նրա բնակարանում, ծխախոտ հանգրեղ Ն.-ի ձախ ձեռքին ու սպառնացել այն գրչահատով, որով կտրել էր նրա մատը: Նա թույլ չի տվել Ջ.-ին և Ն.-ին լքել բնակարանը, մինչև նրանք իր մոտ չբերեին իր որդուն, ով այդ գիշեր գտնվում էր մեկ այլ վայրում: Դատարանը նաև պարզել է, որ վերոնշյալ երեք ժամն անցնելուց հետո դիմումատուն առևանգել է Ն.-ին: Նա նրան ստիպողաբար նստեցրել է իր մեքենան՝ հրամայելով Ջ.-ին երեխային բերել մի վայր, որի հասցեն նա ավելի ուշ պետք է ասեր հեռախոսով: Դիմումատուն Ն.-ին մեքենայով տարել է բենզալցակայան, որտեղ երկու այլ՝ ինքնությունը չբացահայտված անձանց հետ նրան անշարժացրել են, կապել բերանն ու աչքերը և տեղափոխել մեկ այլ փոխադրամիջոց ու տարել մի բնակարան, որտեղ նրան ենթարկել են հետագա բռնությունների: [Բռնությունների] զագաթնակետն է եղել նրա ձեռքերն ու ոտքերը կապելը, սառը ջրի մեջ ընկղմելը, անկողնու վրա գցելը և հեշտոցից և հետանցքից բռնաբարելը: Այնուհետև նրան ստիպել են զանգահարել Ջ.-ին և տալ այն

հասցեն, որտեղ նա պետք է բերեր երեխային: Հանդիպման համար պայմանավորված ժամին դիմումատուն կարճ ժամանակով հեռացել է բնակարանից, երբ այդ ընթացքում մի գլխարկով մարդ Ն.-ին տվել է չոր շորեր և հեռացել սենյակից՝ նախքան դիմումատուի՝ Ջ.-ի և երեխայի հետ վերադառնալը: Այդ բնակարանում մոտ մեկ ժամ միասին մնալուց հետո դիմումատուն մահվան սպառնալիքների ուղեկցությամբ նրանց թույլ է տվել հեռանալ: Վերջում դատարանը պարզել է, որ երբ դիմումատուին ձերբակալել են Prat de Llobregat օդանավակայանում (Բարսելոնա), նրա մոտ եղել են ինքնությունը հաստատող կեղծ փաստաթղթեր:

14. Դիմումատուն (i) Ն.-ի նկատմամբ լուրջ սպառնալիքներ գործադրելու համար որպես կատարող՝ դատապարտվել է 15 ամսվա ազատազրկման, (ii) Ն.-ի բնակարան ներխուժելու և բռնություն ու ճնշում գործադրելու համար՝ երկուսուկես տարվա ազատազրկման և ինն ամսվա նվազագույն եկամտի չափով տուգանքի՝ օրական 12 եվրոյի չափով, (iii) Ն.-ին թեթև մարմնական վնասվածքներ պատճառելու համար՝ տասներկու օր տնային կալանքի, (iii) Ջ.-ին թեթև մարմնական վնասվածքներ հասցնելու համար՝ տասներկու օր տնային կալանքի, (iv) ծանրացուցիչ հանգամանքներում սպառնալիքի ներքո Ն.-ին առևանգելու համար՝ ընտանեկան կապերի առկայության հանգամանքներում՝ ութ տարվա ազատազրկման, (v) Ջ.-ի առևանգման համար՝ երեք տարվա ազատազրկման, (vi) ծանրացուցիչ հանգամանքներում Ն.-ի բարոյական ամբողջականության նկատմամբ ոտնձգելու համար՝ ընտանեկան կապերի առկայության հանգամանքներում՝ երկու տարվա ազատազրկման, (vii) ծանրացուցիչ հանգամանքներում Ն.-ին բռնաբարելու համար տասնհինգ տարվա ազատազրկման՝ ընտանեկան կապերի առկայության հանգամանքներում, և (viii) պաշտոնական փաստաթղթերի կեղծման համար՝ վեց ամսվա ազատազրկման և վեց ամսվա նվազագույն եկամտի չափով տուգանքի՝ օրական 12 եվրոյի չափով: Պատճառված վնասների համար նա նաև 30,525 եվրոյի չափով տուգանվել է:

15. Դիմումատուին վերոնշյալ հանցանքների համար դատապարտելիս Մարգային դատարանը հիմնականում հիմնվել է ենթադրյալ տուժողի մինչդատական քննության ընթացքում տված ցուցմունքների վրա, որոնք ընդունվել էին որպես ապացույց և բարձրաձայն ընթերցվել լսումների ժամանակ: Նրա ցուցմունքի արժանահավատությունն ամրապնդվել է դիմումատուի ցուցմունքների թուլությամբ: Որոշում կայացնելիս առաջին ատյանի դատարանը հիմնվել է նաև այլ ապացույցների վրա: Իր տված ցուցմունքով դիմումատուն հաստատել է Ն.-ի

ցուցմունքներում նշված այնպիսի մանրամասների ճշմարտացիությունը, որոնց համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէր կամ էլ նախատեսված էր մեղմ պատիժ, ինչպես օրինակ՝ առևանգման ժամանակ Ն.-ի՝ դիմումատուին պատկանող շորերը հագնելը, Ջ.-ի ավտոմեքենան վնասելը և Ջ.-ի՝ բացարձակ ոչ պատշաճ ժամի իր երեխային ի վերջո իր մոտ բերելու փաստը: Հիմք են ընդունվել նաև լսումների ժամանակ Ջ.-ի տված ցուցմունքը, դիմումատուի կողմից բնակարան մտնելու մասին պաշտպանության կողմի ոչ ակնհայտ վկայի ցուցմունքների հակասությունները, բժշկական եզրակացությունն առ այն, որ Ն.-ի ստացած մարմնական վնասվածքները համապատասխանում են բռնի գործողությունների ենթարկվելու մասին իր տված ցուցմունքներին, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունն առ այն, որ Ն.-ի ստացած և 15 օր հետո փորձաքննության ենթարկված մարմնական վնասվածքները ժամանակային և պատճառահետևանքային կապի առումով համապատասխանում են բռնի գործողությունների մասին իր տված ցուցմունքներին, փորձագիտական եզրակացությունն առ այն, որ ներկայացված փաստերի համաձայն՝ Ն.-ն տառապում էր հետտրավմատիկ սթրեսի խանգարմամբ և վերջապես, դատարանի ուղղակի գնահատականը կապված Ն.-ի՝ դատական լսումների ընթացքում թեկուզև մասամբ, սակայն բավականաչափ ճշգրիտ և հստակ նկարագրված և իրականում տեղի ունեցածը վեր հանող փաստերը վերապրելու հոգեբանական անկարողության հետ: Դատարանը գտել է, որ մինչդատական քննության ընթացքում տուժողի տված ցուցմունքների՝ որպես ապացույցի, օգտագործումը չի խախտել դիմումատուի՝ իրեն պաշտպանելու իրավունքը, քանի որ նման տեսակի ապացույց ներկայացվել է միայն այն ժամանակ, երբ պարզ էր դարձել, որ Ն.-ի խաչաձև հարցաքննությունն անիրագործելի է, և դիմումատուն հնարավորություն է ունեցել դատական լսումների ընթացքում վիճարկել դրանք: Դատարանն այնուհետև գտել է, որ Ն.-ի տված ցուցմունքների արժանահավատությունն ավելի է ամրապնդվել, երբ դրանք համադրվել են դիմումատուի ոչ ճշմարտանման ցուցմունքի հետ:

16. Դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան, որը 2007 թվականի փետրվարի 21-ին մասնակիորեն բեկանել է Մարզային դատարանի վճիռը: Գերագույն դատարանը մեղմացրել է առևանգման համար նշանակված պատիժը՝ այն համապատասխանեցնելով մեղադրողի ներկայացրած փաստաթղթերին, սպառնալիք գործադրելու հանցագործությունը վերադրակել է, համապատասխանաբար նշանակել ավելի մեղմ



պատիժ, իսկ բարոյական ամբողջականության դեմ ոտնձգության մասով մեղադրանքը հանվել է, քանի որ սույն գործի շրջանակներում այդ հանցանքը կարող էր որակվել որպես բռնաբարություն: Մարզային դատարանի վճիռը մնացած մասով մնացել է անփոփոխ:

17. Գերագույն դատարանը հաստատել է, որ մինչդասական քննության ընթացքում Ն.-ի տված ցուցմունքները դատավարության ընթացքում որպես ապացույց ընդունելու մասին առաջին ատյանի դատարանի որոշմամբ դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու իրավունքը և անմեղության կանխավարկածը չեն խախտվել: Նախևառաջ, Մարզային դատարանը միայն այն ժամանակ է որոշել Ն.-ին չենթարկել խաչաձև հարցաքննության, երբ ակնհայտ է դարձել, որ խաչաձև հարցաքննությունը շարունակելու փորձերն անարդյունք են: Առաջին ատյանի դատարանը սկզբում փորձել է նշված խնդրին լուծում տալ լուսմները դադարեցնելու և վկային բժշկական զննության ենթարկելու կարգադրության միջոցով՝ նպատակ հետապնդելով բացառել վկայի կողմից [ցուցմունք տալու անկարողությունը] կեղծելու ցանկացած հնարավորություն և պատշաճ գնահատել դատարանի առջև ցուցմունք տալու նրա ակնհայտ անկարողությունը: Երբ նույն դժվարություններն ի հայտ են եկել վերջնական լուսմների ընթացքում, առաջին ատյանի դատարանը կարգադրել է Ն.-ին տրամադրել բժշկական օգնություն, որպեսզի հնարավոր լինի ցուցմունք ստանալ անմիջապես իրենից, որը, չնայած գործադրված բոլոր ջանքերի, պարզվել է, որ անհնար է: Այնուհետև, ընդհանուր կանոնի համաձայն, լուսմների ժամանակ պետք է ապահովվի վկային խաչաձև հարցաքննության ենթարկելու հնարավորություն, սակայն, եթե առկա են կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներ, ինչպիսիք են օրինակ՝ վկայի ցուցմունք տալը խանգարող ֆիզիկական կամ հոգեկան խոչընդոտները, որոնց պատճառով դատաքննության ընթացքում հնարավոր չէ ստանալ տուժողի ցուցմունքը՝ որպես դատարանի դահլիճում ցուցմունք տալու այլընտրանք, թույլ է տալիս դատարանում բարձրաձայն ընթերցել մինչդասական քննության ընթացքում տված ցուցմունքները, պայմանով, որ ենթադրյալ խոչընդոտների առկայությունը ստուգվել է: Ավելին, դիմումատուի փաստաբանը պատշաճ ծանուցվել է Ն.-ի մինչդասական քննության փուլում անցկացված հարցաքննության մասին, սակայն առանց որևէ հիմնավորման ներկա չի գտնվել:

18. Գերագույն դատարանը պնդել է, որ նախկինում շարունակաբար շեշտել է, որ առաջին ատյանի դատարանները

պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն ցուցմունքների գնահատմանը, որոնք հանդիսանում են մեղադրյալի դեմ ներկայացված միակ ուղղակի ապացույցը: Դատարանը ևս մեկ անգամ նշել է առաջին ատյանի դատարաններին ուղղված իր հետևյալ խորհուրդը՝ առաջին ատյանի դատարանները պետք է որոշեն այն ապացույցների շրջանակը, որոնց միջոցով հնարավոր կլինի հաստատել այդ ցուցմունքները, որպեսզի նրանք կարողանան դրանք օբյեկտիվորեն գնահատել: Առաջին ատյանի դատարանների կասկածները պետք է փարատվեն նրանով, որ նշված պնդումները վարույթի ընթացքում քմահաճորեն չեն փոփոխվել և նախկինում տուժողները և մեղադրյալը չեն գտնվել այնպիսի փոխհարաբերություններում, որոնք կարող էին հարցականի տակ դնել նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Վերոնշյալ նկատառումների լույսի ներքո Գերագույն դատարանը դրական է գնահատել այն հանգամանքը, որ Մարգային դատարանը Ն.-ի ցուցմունքը գնահատելիս շրջահայաց մոտեցում է ցուցաբերել և դիմումատուին դատապարտելիս հիմնվել է Ն.-ի ցուցմունքները հավաստող այլ լրացուցիչ ապացույցների վրա: Գերագույն դատարանը հավելել է, որ Ն.-ի կողմից ուստիկանությանն ուշ հաղորդում տալը կարող էր բացատրվել նրա վախով և դիմումատուի հետ համատեղ երեխա ունենալու հանգամանքով: Գերագույն դատարանը հաստատել է նաև, որ Ն.-ի տված ցուցմունքում առկա չեն այնպիսի ձևափոխումներ կամ էական փոփոխություններ, որոնք կարող էին այդ ցուցմունքը դարձնել հակասական և այդպիսով ազդել դրա արժանահավատության վրա:

19. Դիմումատուն Գերագույն դատարանի որոշման սահմանադրականության վիճարկման բողոք (*amparo appeal*) է ներկայացրել Սահմանադրական դատարան: 2008 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ բողոքն անընդունելի է ճանաչվել՝ սահմանադրական բովանդակությունից զուրկ լինելու պատճառով:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Սահմանադրություն

20. Սահմանադրության 24-րդ հոդվածը սահմանում է՝

«1. Յուրաքանչյուր ոք իր օրինական իրավունքներն ու շահերն իրականացնելիս ունի դատավորների և դատարանների կողմից արդյունավետ պաշտպանություն ստանալու իրավունք և ոչ մի դեպքում չպետք է մնա անպաշտպան:

2. Նմանապես, յուրաքանչյուր ոք ունի ընդհանուր իրավասության դատարան դիմելու օրենքով նախատեսված իրավունք, իրավաբանական պաշտպանություն և օգնություն ստանալու իրավունք, իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին ծանուցվելու իրավունք, առանց անհարկի ձգձգումների իր գործի հրապարակային և բոլոր երաշխիքների պահպանմամբ քննության իրավունք, իր պաշտպանության համար նպատակահարմար ապացույցների օգտագործման իրավունք, իր դեմ ցուցմունք չտալու իրավունք, իրեն մեղավոր չճանաչելու իրավունք և անմեղության կանխավարկածի իրավունք»:

## **Բ. Քրեական դատավարության մասին օրենք**

21. Քրեական դատավարության մասին օրենքի 730-րդ բաժինը սահմանում է՝

«Լսումների ընթացքում որևէ ապացույց ձեռք բերելու անկարողության դեպքում, ցանկացած կողմի պահանջով համապատասխան [նախնական] քննության արձանագրությունը պետք է բարձրաձայն ընթերցվի»:

## **Գ. Դատավարության մասին օրենք (օրենք թիվ 6/1985)**

22. Դատավարության մասին օրենքի 229-րդ բաժինը նախատեսում է հետևյալը՝

«1. Դատավարությունը, մասնավորապես՝ քրեական գործերով, պետք է հիմնականում լինի բանավոր, առանց դրա գրավոր արձանագրության նկատմամբ կանխակալության:

2. Պնդումները, բանավոր հարցաքննությունները, ցուցմունքները, վիճարկումները, զննությունները, զեկույցները, փորձագետի եզրակացության հաստատումներն ու լսումները պետք է իրականացվեն դատավորի ներկայությամբ կամ դատարանում՝ կողմերի ներկայությամբ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են հրապարակավ միջամտել նշված գործընթացներին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

3. Դատավորի կամ դատարանի համապատասխան որոշմամբ նման վարույթները կարող են իրականացվել տեսահամաժողովի կամ պատկերի և ձայնի երկկողմանի համաժամանակյա հաղորդակցության և աշխարհագրական դիրքով պայմանավորված միմյանցից հեռու գտնվող մարդկանց կամ մարդկանց խմբերին տեսողական, լսողական և բանավոր հաղորդակցման հնարավորություն ընձեռող այլ նմանօրինակ միջոցներով, պայմանով, որ խաչաձև հարցաքննության հնարավորությունը և պաշտպան ունենալու իրավունքը վտանգված չեն:»:

I. ԿՈՆՎԵՆՅԻԱՅԻ 6-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ԲԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

23. Դիմումատուն բողոքել է, որ ո՛չ [նախնական] քննության, ո՛չ դատաքննության ընթացքում իրեն պատշաճ և բավարար հնարավորություն չի ընձեռվել առարկելու և հարցեր ուղղելու տուժողին, ով միակ վկան էր այն բոլոր հանցագործությունների՝ բացառությամբ պաշտոնական փաստաթղթերի կեղծման, որոնց համար վերջինս դատապարտվել էր, որպիսի իրավունքը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով՝

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի (...) արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

(...)

(դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:»:

24. Կառավարությունը վիճարկել է այս փաստարկը:

**Ա. Ընդունելիությունը**

25. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով և պետք է հայտարարվի ընդունելի:

**Բ. Գործի ըստ էության քննությունը**

*1. Կողմերի դիրքորոշումները*

**(ա) Դիմումատուն**

26. Դիմումատուն պնդել է, որ բոլոր հանցագործությունների կատարման համար, բացի պաշտոնական փաստաթղթերի կեղծումից, իր դատապարտումը և ի վերջո պատժի նշանակումը հիմնված է եղել Ն.-ի՝ բացառապես մինչդատական քննության փուլում տված ցուցմունքների վրա:

27. Այդ կապակցությամբ դիմումատուն հայտնել է, որ միակ ապացույցը, որի հիման վրա դատարանը կարող էր քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձին դատապարտել, լուսմների ընթացքում ձեռքբերված ապացույցն էր, և որ պատասխանող Կառավարությունը չի վիճարկել այն փաստը, որ լուսմների ընթացքում իրեն հնարավորություն չի տրվել վիճարկելու և հարցեր ուղղելու ենթադրյալ տուժողին:

28. Նա նաև պնդել է, որ իր փաստաբանը չի մասնակցել Ն.-ի՝ մինչդատական քննության ժամանակ անցկացված հարցաքննությանը, ուստի, ո՛չ մինչդատական քննության փուլում, ո՛չ [դատական] լուսմների ժամանակ նրան խաչաձև հարցաքննության ենթարկելու հնարավորություն չի ունեցել:

29. Դիմումատուն հղում է կատարել *Մայալին ընդդեմ Ֆրանսիայի (Mayali v. France*, գանգատ թիվ 69116/01, 14 հունիսի 2005 թվական և *Կարպենկոն ընդդեմ Ռուսաստանի (Karpenko v. Russia*, գանգատ թիվ 5605/04, 13 մարտի 2012 թվական) ձևավորված Դատարանի նախադեպային իրավունքին՝ բողոքելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված իր իրավունքներն անընդունելիորեն սահմանափակվել են: Նա մեղադրել է ներպետական դատարաններին Ն.-ին հարցաքննելու հնարավորություն իրեն անարդարացիորեն չընձեռելու մեջ, քանի որ իր կարծիքով Ն.-ին խաչաձև հարցաքննությունից ազատել էին առանց հիմնավոր պատճառի: Դիմումատուն անդրադարձել է Գերագույն դատարանի վճռի 10-րդ էջին, համաձայն որի՝ վերջին լուսմները հիմք ընդունող բժշկական եզրակացությունը ենթադրյալ տուժողի համար դատավարության ընթացքում ցուցմունք տալու որևէ բժշկական խոչընդոտ չէր հայտնաբերել: Նա պնդել է, որ ենթադրյալ տուժողին խաչաձև հարցաքննության ենթարկելու անհնարինության պատճառը, հակառակ ներպետական դատարանների պնդումների, ոչ թե նրա ենթադրյալ հետտրավմատիկ սթրեսի ախտանշաններն էին, որոնք բժշկական ճանապարհով հաստատված չէին, այլ ավելի շուտ ցուցմունք չտալու նրա ցանկությունը, որպեսզի խուսափի մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքներին հակասող ցուցմունքներ տալուց:

**(բ) Կառավարությունը**

30. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի պնդումն առ այն, որ բոլոր հանցագործությունների, բացառությամբ պաշտոնական փաստաթղթերի կեղծման, կատարման համար իր դատապարտումը և ի վերջո պատժի նշանակումը բացառապես

հիմնված են եղել մինչդասական քննության փուլում տուժողի տված ցուցմունքի վրա: Կառավարությունը պնդել է, որ վճիռներից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ միակ դատապարտումը, որը գուցե բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված է եղել ենթադրյալ տուժողի ցուցմունքների վրա՝ բռնաբարության համար դիմումատուի դատապարտումն է:

31. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի փաստաբանը պատշաճ կերպով ծանուցվել է տուժողի՝ 2004 թվականի հուլիսի 22-ին Գավայի թիվ 5 հետաքննող դատավորի իրականացրած հարցաքննության մասին, սակայն, առանց որևէ հիմնավորման չի մասնակցել: [Կառավարությունը] նաև գնահատել է այն հանգամանքը, որ 2004 թվականի սեպտեմբերի 16-ից դիմումատուի պաշտպանությունը ստանձնած փաստաբանը մինչև [դատական] լուսմների սկսելը հետաքննող դատավորին տուժողին նոր խաչաձև հարցաքննության ենթարկելու միջնորդություն չի ներկայացրել:

32. Կառավարությունը վկայակոչել է Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ միակ իրավաչափ ապացույցը, որի հիման վրա դատարանները կարող են քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձին դատապարտել՝ սկզբունքորեն նրա ներկայությամբ հրապարակային լուսմների ժամանակ ձեռքբերված ապացույցն է, որի առնչությամբ մեղադրյալը կարող էր ներկայացնել իր հակափաստարկները. այդ սկզբունքից բացառություններ հնարավոր են միայն բացառիկ հանգամանքներում, օրինակ՝ եթե պարզվում է, որ վկան իր հոգեկան վիճակից ելնելով փաստացի չի կարողացել [դատական] լուսմների ընթացքում ցուցմունք տալ: Այդ դեպքերում դատարաններին թույլատրվում է հիմնվել դատավարության ավելի վաղ փուլերում վկաների տված ցուցմունքների վրա, պայմանով, *inter alia*, որ դրանք բարձրաձայն ընթերցվեն դատարանի դահլիճում, և մեղադրյալին դրանք վիճարկելու բավարար հնարավորություն ընձեռեն, ինչպես տեղի է ունեցել այս գործում: Կառավարությունը նաև նշել է, որ այս բացառությունը կիրառելի չէ վկաների ֆիզիկական հիվանդությունների դեպքերում, քանի որ Սահմանադրական դատարանը քրեական օրենսդրության [շրջանակներում] այս իրավիճակներին առավել համապատասխան լուծումներ է գտել, ինչպես օրինակ՝ տնային պայմաններում հարցաքննությունները կամ տեսահամաժողովի միջոցով ցուցմունք տալը:

33. Կառավարությունն այնուհետև պնդել է, որ Դատարանի կայացրած վճիռների հիմնավորումներից, ինչպես *Կրասնիկին ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Krasniki v. the Czech Republic)*

(գանգատ թիվ 51277/99, 28 փետրվարի 2006 թվական) և *Ալ-Խավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* (Մեծ Պալատ) (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*) ([GC], գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, ՄԻԵԴ 2011 թվական) գործերից, կարելի է եզրակացնել, որ վկայի կամ այլ անձի՝ մահվան կամ ֆիզիկական վնասվածքների կամ նույնիսկ տնտեսական լուրջ կորուստների հնարավոր վախն այն հիմնավոր հանգամանքներն են, որոնք առաջին աստիճանի դատարանները կարող են հաշվի առնել վկային դատավարությանը մասնակցելուն ազատելուց:

34. Այս կապակցությամբ Կառավարությունը հայտարարել է, որ Բարսելոնայի մարզային դատարանը ձեռնարկել է իր տրամադրության տակ եղած բոլոր հակակշռող միջոցառումները, այդ թվում նաև տրամադրել է ընթացակարգային երաշխիքներ, որպեսզի դիմումատառին փոխհատուցի լուսմների ընթացքում նրա կամ նրա փաստաբանի կողմից տուժողին խաչաձև հարցաքննության ենթարկելու անհնարինությունից առաջացած անբարենպաստ հետևանքների համար: Առաջին աստիճանի դատարանը հանգամանորեն գնահատել է լուսմների ժամանակ ձեռք բերված ապացույցները և լուսմներից առաջ ու դրանց ընթացքում տված ցուցմունքների արժանահավատությունը:

35. Ավելին, Կառավարությունը վկայակոչել է Բարսելոնայի մարզային դատարանի հիմնավորումը (տե՛ս վերը նշված 11-րդ պարբերությունը), որպեսզի ընդգծի, որ առաջին աստիճանի դատարանը որոշել է չիրականացնել տուժողի խաչաձև հարցաքննությունը միայն այն ժամանակ, երբ ակնհայտ է դարձել, որ այն շարունակելու փորձերը բացարձակ անիրագործելի են: Կառավարությունը վկայակոչել է տուժողի՝ 2004 թվականի հուլիսի 22-ի և 2005 թվականի նոյեմբերի 4-ի երկու բժշկական գործերը, որոնք կցվել էին [Կառավարության ներկայացրած] դիրքորոշումներին: Առաջին գործում նշվել է, որ տուժողը, ենթարկվելով նյարդային «ցնցման» և իրեն զգալով անօգնական, վախեցել է իր կյանքի համար: Երկրորդ գործում եզրակացվել է, որ նա տառապում է քրոնիկական հետտրավմատիկ սթրեսով և դատարանում հարցաքննվելու համար չունի անհրաժեշտ հոգեբանական ներուժ:

## 2. Դատարանի գնահատականը

### (ա) Մույն գործով կիրառելի ընդհանուր սկզբունքները

36. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը 6-րդ հոդվածի 1-ին կետով

երաշխավորված արդար դատաքննության իրավունքի առանձնահատուկ կողմ է, որը դատավարության անաչառությունը գնահատելիս յուրաքանչյուր անգամ պետք է հաշվի առնել: Հետևաբար, գանգատը կքննվի երկու դրույթների զուգակցմամբ (տե՛ս, ի թիվս այլ նախադեպերի, *Աշն ընդդեմ Ավստրիայի* (*Asch v. Austria*) 26 ապրիլի 1991 թվական, § 25, Շարք Ա թիվ 203, և *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի* (*S.N. v. Sweden*), գանգատ թիվ 34209/96, § 43, ՄԻԵԴ 2002-V):

37. Դատարանն այնուհետև հիշեցնում է, որ ապացույցների ընդունելիությունը հիմնականում կարգավորվում է ներպետական իրավունքով և, որպես կանոն, ներպետական դատարանները պետք է գնահատեն իրենց ներկայացրած ապացույցները: Սովորաբար ներպետական դատարաններն են նաև որոշում, թե արդյոք անհրաժեշտ կամ նպատակահարմար է լսել վկային, քանի որ 6-րդ հոդվածը մեղադրյալին դատարանում վկայի ներկայությունն ապահովելու անսահմանափակ իրավունք չի տրամադրում (տե՛ս *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի* (*S.N. v. Sweden*), § 44): Դատարանի խնդիրն է համոզվել, թե արդյոք դատավարությունը՝ որպես ամբողջություն, ներառյալ՝ ապացույցները ձեռք բերելու միջոցները, արդար է եղել (տե՛ս *Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների* (*Doorson v. the Netherlands*), 26 մարտի 1996 թվական § 67, ՎՃԻՌների և որոշումների զեկույցներ 1996-II, և *Գոսան ընդդեմ Լեհաստանի* (*Gossa v. Poland*), գանգատ թիվ 47986/99, §52, 9 հունվարի 2007 թվական):

38. Հակափաստարկ բերելու հնարավորության տրամադրման նպատակով, որպես կանոն, բոլոր ապացույցները պետք է ձեռք բերվեն մեղադրյալի ներկայությամբ՝ հրապարակային դատաքննության ընթացքում: Մակայն, ոստիկանական քննության և դատաքննության փուլերում ձեռք բերված ապացույցների օգտագործումն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին կետին և 3-րդ կետի «դ» ենթակետին, պայմանով, որ հարգվել են պաշտպանության իրավունքները: Որպես կանոն՝ այդ իրավունքները պահանջում են, որպեսզի մեղադրյալին տրվի բավարար և պատշաճ հնարավորություն՝ իր դեմ ցուցմունք տվող վկայի ցուցմունքները վիճարկելու և նրան հարցեր ուղղելու համար՝ վերջինիս ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի ավելի ուշ փուլում (տե՛ս *Ունթերփերթինգերն ընդդեմ Ավստրիայի* (*Unterpertinger v. Austria*), 24 նոյեմբերի 1986 թվական, § 31, Շարք Ա թիվ 110): Երբ դատապարտումը բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված է այն պնդումների վրա, որոնք ներկայացրել է անձը, ում մեղադրյալը հարցեր ուղղելու հնարավորություն չի ունեցել կամ



այդ անձը [մինչդատական] քննության կամ դատավարության ընթացքում չի հարցաքննվել, ապա պաշտպանության իրավունքների նման սահմանափակումը անհամատեղելի է 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (տե՛ս մասնավորապես, *Լուկան ընդդեմ Իտալիայի* (*Lucà v. Italy*), գանգատ թիվ 33354/96, § 40, ՄԻԵԴ 2001-II, և *Ալ-Խավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* (Մեծ Պալատ) (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*) [GC], գանգատների թիվ 26766/05 և 22228/06, § 119, ՄԻԵԴ 2011 թվական):

39. Այս կապակցությամբ Դատարանը նշել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը 3-րդ կետի գուգակցմամբ պահանջում է, որ Պայմանավորվող պետությունները գործնական քայլեր ձեռնարկեն, որպեսզի մեղադրյալն իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորություն ունենա կամ որ այդ վկան ենթարկվի հարցաքննության (տե՛ս *Սադակը և այլք ընդդեմ Թուրքիայի* (*Sadak and Others v. Turkey*) (թիվ 1), գանգատների թիվ 29900/96, 29901/96, 29902/96 և 29903/96, § 67, ՄԻԵԴ 2001-VIII): Այդ միջոցառումն այն ջանքերի մասն է կազմում, որը Պայմանավորվող պետությունները պետք է գործադրեն, որպեսզի ապահովեն 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրականացումը (ի թիվս այլ նախադեպերի տե՛ս *Կոլոզան ընդդեմ Իտալիայի* (*Colozza v. Italy*), 12 փետրվարի 1985 թվական, § 28, Շարք Ա թիվ 89): Սակայն ոչ ոք անհնարինն անելու պարտականություն չունի (*impossibilium nulla obligatio est*). Եթե իշխանություններին չի կարելի մեղադրել պատասխանող կողմին գործով վկային հարցեր ուղղելու հնարավորություն ընձեռելուն ուղղված ոչ բավարար ջանքեր գործադրելու մեջ, ապա վկայի [հարցաքննության] անհնարինությունը, որպես այդպիսին, վարույթը դադարեցնելու անհրաժեշտություն չի առաջացնում (տե՛ս *Արտներն ընդդեմ Ավստրիայի* (*Artnet v. Austria*), 28 օգոստոսի 1992 թվական, § 21, Շարք Ա թիվ 242-A, *Մայալին ընդդեմ Ֆրանսիայի* (*Mayali v. France*), գանգատ թիվ 69116/01, § 32, 14 հունիսի 2005 թվական, և *Շ.-ն ընդդեմ Լատվիայի* (*Ž. v. Latvia*), գանգատ թիվ 14755/03, § 94, 24 հունվարի 2008 թվական):

40. Այն հարցը, թե արդյոք պահպանվել են 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի [պահանջները] Դատարանի՝ վերը նշված Լուկայի (*Lucà*) գործով տված մեկնաբանության համապատասխան, Դատարանի նախադեպային իրավունքում ծագել է հիմնականում երեք տարբեր համատեքստում: Առաջին համատեքստը վերաբերում է այսպես կոչված «անանուն վկաների» գործին, որտեղ վկայի ինքնությունը քողարկվում է, որպեսզի,

օրինակ, նրան պաշտպանեն հաշվեհարդարի սպառնալիքներից և ահաբեկումից (տե՛ս, օրինակ, վերը նշված *Դուրսոնի (Doorson)* գործը): Երկրորդ համատեքստը վերաբերում է «բացակայող վկաների» գործերին, որտեղ, որպես ապացույց օգտագործվում են այն վկայի տված ցուցմունքները, ով ցուցմունք տալու համար անձամբ չի ներկայանում դատարան, որովհետև մահացել է, նրան չեն կարողացել գտնել, կամ հրաժարվել է ներկայանալ վախի կամ որևէ այլ պատճառով (տե՛ս օրինակ՝ *Կրաքսին ընդդեմ Իտալիայի (թիվ 1) (Craxi v. Italy, no. 1)*, զանգատ թիվ 34896/97, 5 դեկտեմբերի 2002 թվական, վերը նշված՝ *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի (S.N. v. Sweden)*, *Ալ-Խավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության (Մեծ Պալատ) (Al-Khawaja and Tahery v. the United Kingdom) [GC]*, զանգատներ թիվ 26766/05 և 22228/06, ՄԻԵԴ 2011 թվական): Այդ կատեգորիաները միմյանց չեն հակասում, քանի որ վկան կարող է լինել և՛ անանուն, և՛ բացակայող (տե՛ս՝ օրինակ՝ *Լուդին ընդդեմ Շվեյցարիայի (Lüdi v. Switzerland)*, 15 հունիսի 1992 թվական, Շարք Ա թիվ 238 և *Վան Մեխելենն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Van Mechelen and Others v. the Netherlands)*, 23 ապրիլի 1997 թվական, վճիռների և որոշումների տեղեկագիր 1997-III): Երրորդ համատեքստը վերաբերում է այն վկաներին, ովքեր վկայակոչել են իր դեմ ցուցմունք չտալու իրենց իրավունքը (տե՛ս օրինակ՝ *Վիդգենն ընդդեմ Նիդեռլանդների (Vidgen v. the Netherlands)*, զանգատ թիվ 29353/06, 10 հուլիսի 2012 թվական):

41. Այդ երեքի համատեքստում Դատարանը միշտ անհրաժեշտ է համարել իրականացնել դատավարության անաչառության ընդհանուր քննություն՝ որոշելու, թե արդյոք մեղադրյալի իրավունքներն անընդունելիորեն են սահմանափակվել: Դա ավանդաբար ներառել է և՛ մեղադրյալի դեմ հարուցված գործով չստուգված ապացույցների նշանակության գնահատումը, մասնավորապես՝ արդյոք չստուգված ապացույցը դիմումատուի դեմ բերված միակ կամ վճռորոշ նշանակություն ունեցող ապացույցն է հանդիսացել (տե՛ս օրինակ՝ *Կորնեվը և Կարպենկոն ընդդեմ Ուկրաինայի (Kornev and Karpenko v. Ukraine)*, զանգատ թիվ 17444/04, §§ 54-57, 21 հոկտեմբերի 2010 թվական, *Յական ընդդեմ Ալբանիայի (Caka v. Albania)*, զանգատ թիվ 44023/02, §§ 112-16, 8 դեկտեմբերի 2009 թվական, *Գիլուրին ընդդեմ Ֆրանսիայի (Guilloury v. France)* զանգատ թիվ 62236/00, §§ 57-62, 22 հունիսի 2006 թվական, վերը նշված *Լուկայի (Lucà)* գործը, §§ 40-43 և *Վիդգենի (Vidgen)* գործը, §§ 45-46), և՛ այն հակակշռող միջոցառումների գնահատումը, որոնք դատական իշխանությունները ձեռնարկել են փոխհատուցելու այն թերությունների համար, որոնց

պայմաններում գործել է պաշտպանության կողմը (տե՛ս՝ վերը նշված *Դուրսոնի (Doorson)* գործը, §§ 73-76, *Ս.Ն.-ն ընդդեմ Շվեդիայի գործը (S.N. v. Sweden)*, §§. 49-53, *Վ.Դ.-ն ընդդեմ Ռումինիայի (V.D. v. Romania)* գանգատ թիվ 7078/02, §§ 113-115, 16 փետրվարի 2010 թվականի և վերը նշված՝ *Ալ-Խավայա և Թահերիի (Al-Khawaja and Tahery)* գործը, §§ 147 և 153-65, և *Վիդգենի (Vidgen)* գործը, § 47):

42. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատավարության անաչառությունը գնահատելիս այսպես կոչված «բացառապես կամ վճռորոշ չափով» կանոնը չպետք է կիրառվի ոչ ճկուն ձևով, քանի որ այդ դեպքում կանոնը կփոխակերպվի մի բուրսու անսկզբունքային գործիքի, որը հակասում է դատավարության ընդհանուր անաչառության հարցի, մասնավորապես՝ արդարադատության արդյունավետ իրականացման համատեքստում պաշտպանության կողմի, տուժողի և վկայի շահերի և հանրային շահի գնահատման վերաբերյալ Դատարանի արտահայտած ավանդական մոտեցմանը (տե՛ս վերը նշված *Ալ-Խավայա և Թահերիի (Al-Khawaja and Tahery)* գործը, § 146): Դատարանն այդպիսով գտել է, որ երբ դատապարտումը բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված է այնպիսի ցուցմունքների վրա, որոնք տրամադրվել են բացակայող վկայի կողմից, ով պաշտպանության խաչաձև հարցաքննության ենթարկվելու համար հասանելի չի եղել, ապա վերոնշյալ ցուցմունքների ընդունումը որպես ապացույց, ինքնաբերաբար չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Նման դեպքերում, սակայն, Դատարանը պետք է վարույթն ենթարկի հանգամանալից ուսումնասիրության: Նման ապացույցն ընդունելի ճանաչելու վտանգների պատճառով շատ կարևոր գործոն է հավասարակշռումը, որը պահանջում է բավարար հակակշռող գործոնների, ներառյալ ուժեղ ընթացակարգային երաշխիքների առկայություն: Հարցն ամեն դեպքում այն մասին է, թե արդյոք առկա են գործող և բավարար հակակշռող գործոններ, այդ թվում և այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ կերպով գնահատել փոխարինող ապացույցների արժանահավատությունը: Սա թույլ կտա, որպեսզի դատապարտումը հիմնվի նման ապացույցների վրա միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ արժանահավատ են՝ հաշվի առնելով գործում դրանց կարևորությունը (տե՛ս նույն տեղում, § 147):

(բ) Ընդհանուր սկզբունքների կիրառելիությունը սույն գործում

43. Հաշվի առնելով իրեն ներկայացված նյութերը՝ Դատարանը ընդունում է, որ մինչդատական վարույթի ընթացքում Ն.-ի տված ցուցմունքները դիմումատուի կատարած բոլոր հանցագործությունների (բացառությամբ պաշտոնական փաստաթղթերի կեղծման) համար առաջադրված մեղադրանքներով նրան մեղավոր ճանաչելու համար էական ապացույցներ էին: Դատարանը սակայն գտնում է, որ նշված ցուցմունքները միակ կամ վճռորոշ նշանակության ուղղակի ապացույցներն էին միայն այն փաստերի առնչությամբ, որոնք տեղի էին ունեցել Ն.-ին իր բնակարանից առևանգելու և Ջ.-ի՝ Ն.-ի որդու հետ միասին [Ն.-ի] պահելու վայրի հասցե գալու ժամանակահատվածում՝ Ն.-ին մարմնական վնասվածքներ էր հասցրել (ինչի համար դատապարտվել էր տասներկու օր տնային կալանքի), և բռնաբարել էր (դատապարտվել տասնհինգ տարի ազատազրկման): Ուստի, Դատարանը, նկատի ունենալով բոլոր ներպետական վարույթները, կսահմանափակվի այս երկու դատապարտումների վերաբերյալ ներպետական դատարանների վճիռների վերլուծությամբ:

44. Դատարանը վերահաստատում է, որ Ն.-ն չի ենթարկվել խաչաձև հարցաքննության դիմումատուի կամ նրա փաստաբանի կողմից, թեև նա անձամբ ցուցմունք տալու նպատակով ներկայացել էր և՛ հետաքննող դատավորին, և՛ առաջին ատյանի դատարան: Դատարանը նշում է, որ 2004 թվականի հուլիսի 22-ին հետաքննող դատավորը հարցաքննել է Ն.-ին, և հարցաքննության ընթացքում դիմումատուի փաստաբանը կարող էր հարցեր ուղղել նրան: Փաստաբանը պատշաճ ծանուցվել էր հարցաքննության մասին, որին սակայն առանց հիմնավորման չի մասնակցել (տե՛ս վերը նշված 9-րդ պարբերությունը): Հետևաբար պարզ է, որ Ն.-ին հարցեր ուղղելու հնարավորություն դիմումատուին տրամադրվել է, սակայն նրա փաստաբանն անհիմն կերպով բաց է թողել այդ հնարավորությունը: Դատարանը համարում է, որ ներպետական իշխանություններին չի կարելի մեղադրել այն բանի համար, որ հետաքննող դատավորը վճռել է հարցաքննությունն անցկացնել դիմումատուի փաստաբանի բացակայությամբ: Այնուհանդերձ, Դատարանը նշում է, որ այդ փաստը դատավարության անաչառության մասին եզրակացնելու համար վճռորոշ չէ: Ինչպես արդեն նշվել է, ըստ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի, Դատարանի դերը կայանում է նրանում, որ համոզվի, որ դատավարությունը որպես ամբողջություն, արդար է եղել: Գործի փաստական հանգամանքները պահանջում են որպեսզի Դատարանը պարզի՝ արդյոք դատական իշխանությունների

կողմից ձեռնարկվել են գործուն քայլեր, որպեսզի դիմումատուն Ն.-ին հարցեր ուղղելու հնարավորություն ունենա կամ Ն.-ն հարցաքննության ենթարկվի դատական լուսմների ընթացքում, որի ժամանակ սովորաբար ձեռք են բերվում ապացույցները:

45. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ, հաշվի առնելով 2004 թվականի ապրիլի 4-ին և 6-ին տեղի ունեցածը նկարագրելու Ն.-ի անկարողությունը, առաջին ատյանի դատարանը հետաձգել է լուսմները, և երբ բժշկական եզրակացությամբ հաստատվել է, որ Ն.-ն տառապում է հետտրավմատիկ սթրեսային ախտանշաններով, դատարանը կարգադրել է նրան տրամադրել հոգեբանական օգնություն՝ հրապարակային դատաքննության ժամանակ նրան հանգամանալից խաչաձև հարցաքննության ենթարկելու նպատակով: Չնայած վերջնական լուսմներից առաջ իրականացված բժշկական փորձաքննությունը պարզել էր, որ Ն.-ն ի վիճակի է ցուցմունք տալ, մինչ հանրային մեղադրողը կավարտեր հարցաքննությունը՝ Ն.-ի [առողջական վիճակը] վատացել է: Միայն Ն.-ին իր ցուցմունքները շարունակել օգնելուն միտված բազմաթիվ անհաջող ջանքերից, այդ թվում՝ բժշկական օգնությունից հետո, դատարանը որոշել է, որ որպես կողմերի ուղղակի խաչաձև հարցաքննության այլընտրանք պետք է բարձրաձայն ընթերցել նրա մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքները: Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել, որ Ն.-ն ի վիճակի չի լինի ողջամիտ ժամանակահատվածում մասնակցելու խաչաձև հարցաքննությանը և որ դիմումատուն գտնվում է բանտում՝ կալանքի տակ: Լուսմներից հետո փորձագիտական եզրակացությամբ հաստատվել է, որ Ն.-ն տառապում է հետտրավմատիկ սթրեսային խանգարումով: [Այս] հանգամանքների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ մեղադրյալին՝ վկային հարցեր ուղղելու հնարավորություն տրամադրելուն ուղղված բավարար ջանքեր չգործադրելու համար առաջին ատյանի դատարանին մեղադրել չի կարելի: Դատարանը չի կարող նաև համաձայնել դիմումատուի այն պնդմանը, որ առաջին ատյանի դատարանն ոչ պատշաճ կերպով է Ն.-ին ազատել խաչաձև հարցաքննությունից:

46. Ի վերջո Դատարանը պետք է ուսումնասիրի, թե արդյոք մինչդատական վարույթի ընթացքում Ն.-ի տված ցուցմունքներն օգտագործելիս ներպետական դատարանները դրանք զուգորդել են բավարար հակակշռող գործոններով, այդ թվում և այնպիսի միջոցառումներով, որոնք թույլ են տվել իրականացնել ներկայացված ապացույցների արժանահավատության արդար և

պատշաճ գնահատում: Դատարանը վերահաստատում է, որ միայն այն դատապարտումները, որոնք սույն գործում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի հետ կապված հարցեր են առաջացնում՝ մարմնական վնասվածքների և բռնաբարության համար դատապարտումներն են՝ այնքանով, որքանով դրանց համար բացառապես կամ վճռորոշ չափով հիմք են ընդունվել տուժողի՝ առանց խաչաձև հարցաքննության ենթարկվելու տված ցուցմունքները:

47. Դատարանին հայտնի են այն դժվարությունները, որոնց ներպետական դատարանները բախվում են սեռական հանցագործությունները քննելիս (տե՛ս համապատասխան փոփոխություններով՝ (*mutatis mutandis*), *Տյագունովան ընդդեմ Ռուսաստանի* (*Tyagunova v. Russia*), գանգատ թիվ 19433/07, § 68, 31 հուլիսի 2012 թվական), որոնք սովորաբար պարուրված են գաղտնիությամբ և վախի կամ այլ պատճառներով դրանց չափազանց ուշ հաղորդումը հաճախ հանգեցնում է ամբողջական, հաստատող բժշկական քննություն անցկացնելու անհնարիության: Այսպիսով, նմանատիպ շատ գործերում մեղադրյալի դատապարտման համար բացառիկ կամ վճռորոշ նշանակության միակ ապացույցը՝ տուժողի ցուցմունքն է, որի ճշմարտացիությունն ու արժանահավատությունը պաշտպանության կողմը կարող է վիճարկել լսումների ժամանակ՝ տուժողին խաչաձև հարցաքննության ենթարկելու միջոցով: Սույն գործով պարզ է դարձել, որ տուժողի խաչաձև հարցաքննությունն անհրաժեշտ էր հետտրավմատիկ սթրեսի ախտանշանների պատճառով, որոնք, ինչպես արդեն նշվել է, հաստատվել էին բժշկական եզրակացությամբ (տե՛ս վերը նշված 11-րդ պարբերությունը):

48. Այդուհանդերձ, Դատարանը նշում է, որ վարույթի մինչդատական փուլում դիմումատուին Ն.-ին հարցեր ուղղելու հնարավորություն էր տրվել, սակայն նրա փաստաբանը չէր մասնակցել հարցաքննությանը (տե՛ս վերը նշված 9-րդ պարբերությունը): Նման հանգամանքներում Ն.-ի ցուցմունքները որպես ապացույց ընդունելն ակնհայտորեն բխել է արդարադատության շահերից: Դատարանը նշում է, որ նշված ցուցմունքները բարձրաձայն ընթերցվել են առաջին աստիճանի դատարանում, և որ դիմումատուին թույլ է տրվել վիճարկել դրանց ճշմարտացիությունը՝ փաստերի սեփական նկարագրությունը ներկայացնելու միջոցով, ինչը նա պատշաճ կերպով արել է: Դատարանն այնուհետև նշում է, որ ներպետական դատարանները հանգամանորեն համեմատել են փաստերի երկու

նկարագրությունները, որոնք, մասնավորապես, մասնակիորեն համընկել են քրեական պատասխանատվություն նախատեսված չլինելու կամ մեղմ պատիժ նախատեսելու առումներով: Դիմումատուի ներկայացրած փաստերի նկարագրությունը համարվել է թույլ և ոչ հետևողական, իսկ Ն.-ինը՝ տրամաբանական և բավարար մանրամասն, ինչն էլ հիմք է հանդիսացել, որպեսզի ստի կամ վրեժխնդրության բոլոր կասկածները ժխտվեն: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները նույնպես հաշվի են առել լսումների ընթացքում Ն.-ի տված ցուցմունքները, որոնք, թեկուզ ամբողջական չէին, բայց հաստատեցին մինչդեռ տական վարույթի ընթացքում նրա տված ցուցմունքները (տե՛ս վերը նշված 11-րդ պարբերությունը): Ն.-ի ցուցմունքների արժանահավատությունն այնուհետև հաստատվել է անուղղակի ապացույցներով, ինչպես օրինակ, այն փաստով, որ դիմումատուն նրան առևանգել է նրա բնակարանից, և երբ դիմումատուն վերջինիս ազատել է, նա հազին ունեցել է այլ՝ դիմումատուին պատկանող շորեր, ինչպես նաև բժշկական փորձաքննության արդյունքում կազմված կարծիքներով և եզրակացություններով, որոնք հաստատում էին ներկայացրած փաստերին նրա մարմնական վնասվածքների ու հոգեբանական վիճակի համապատասխանությունը (տե՛ս վերը նշված 15-րդ պարբերությունը): Իսկապես, բոլոր այդ անուղղակի ապացույցների գնահատման արդյունքում Գերագույն դատարանը եզրակացրել է, որ առաջին ատյանի դատարանը Ն.-ի ցուցմունքների վրա հիմնվելիս գործել էր բավարար զգուշությամբ (տե՛ս վերը նշված 18-րդ պարբերությունը):

49. Այս ամենի հիմքով և ընդհանուր առմամբ վերանայելով վարույթների անաչառությունը՝ Դատարանը համարում է, որ առկա են եղել բավարար հակակշռող գործոններ՝ եզրակացնելու, որ Ն.-ի ցուցմունքները որպես ապացույցի ընդունելը չի հանգեցրել Կոնվենցիայի խախտման՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի զուգակցմամբ:

50. Հետևաբար, վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում տեղի չի ունեցել:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

51. Դիմումատուն Կոնվենցիայի 3-րդ, 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի և 3-րդ կետի «գ» ենթակետի և 13-րդ հոդվածների

շրջանակներում ներկայացրել է տարբեր այլ բողոքներ: Իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերի լույսի ներքո և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատագորության ներքո՝ Դատարանը գտնում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք: Այսպիսով հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

### ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶՄԱՅՆ

1. *Հայտարարում է՝* Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի առնչությամբ Գանգատը ընդունելի է, իսկ գանգատի մնացած մասն՝ անընդունելի:

2. *Վճռում է՝* Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում տեղի չի ունեցել :

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2013 թվականի փետրվարի 19-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Սանտիագո Քեսադա  
(Santiago Quesada)  
Քարտուղար

Ժոզեֆ Բասադեվալ  
(Josep Casadevall)  
Նախագահ